

4783

1947-0 97

ԱԵՐ. ՄԱԿԵԴՈՆԻԱԿԻ

ՈՊՊՈԶԻՑԻԱՆ ՄԵՐ
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ



ՅԵՐԵՎԱՆ 1927

ՀԿՊՀ
Մ-18

EFDS AUS JUL 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՍԻԱՑԵՔ

NOV 2009

Հ. Վ. Գ. (Բ) ԿԵՆՏՐՈՆԵԿԸՆ ԿՈՄԻՏԵՑՔ
ԵԳԻՑ-ԳՐՈՊ. ԲԵԺՆԻ ՀՐԵՍԵՐԸԿՈՒԹՅՈՒՆ

ՅԿՊ

5-18

ՍԵՐ. ՄԱԿԵԴՈՆՍԿԻ

14 NOV 2009

ՈՊՊՈԶԻՑԻԱՆ ՄԵՐ
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ



ՅԵՐԵՎԱՆ

1927

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 765
ԳՐԱՓ. 469 Գ. ՏԻՐԱԺ 1200



38080-62

ՈՂՈՊՈՉԻՑԻԱՆ ՄԵՐ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄՐ

Ներկայումս Համամիութենական կոմմունիստական (բ) կուսակցության բոլոր կազմակերպություններում սկսվել է նախահամագումարյան դիսկուսիան։ Բոլոր բջիջներում քննության են առնվում այն խնդիրները, վորոնք պետք է իրենց լուծումն ստանան կուսակցության 15-րդ համագումարի կողմից։

Տրոցկիստական ոպպոզիցիան, զորակոչի յե յենթարկում իր բովանդակ «ուժք» և մնացորդները։ Խ.Ա.Հ.Մ. կենտրոնական ուսյոններից ստացված տեղեկություններն արդեն սկսել են լույս տեսնել մեր մասունքի նշերում։

Ամեն տեղ ել ոպպոզիցիոնները գործ են ածում իրենց սիրած միշտ նույն դարձվածքները՝ «կուսակցության ուժիմի», «կուսակցությունը խեղդելու», «կուսակցությունը լիկվիդացիայի յենթարկելու» մասին և այլն, չնայած նրան վոր լայն հնարավորություն և արվում արտահաւաքելու։

Համկոմկուսի լենինյան դեկավարությունը, լենինյան—բոյլերկյան կուսակցությունը, դիսկրիլիտացիանի յենթարկելու գործում ոպպոզիցիան վոչ մեկ բանի առաջ կանգ չի առնում։

«Ներկա ապարատի միջոցով, ներկա ռեժիմի միջոցով, ներկում են պրոետարական ավանդարդը, ամրացած բյուրոկրատները, նույն քվում և բանվոր բյուրոկրատները, աղմինիստրատորները, տնտեսարարները, նոր սեփականատերերը. բաղադի և գյուղի արտոնյալ ինտիլիգենցիան»*:

«Բանվոր կուսակցականը վախենում և խոսել իր սեփական բջիջում, վախենում և խղճով քվեարկել...չի կարելի խեղդել բանվորական բջիջները...» և այլն: (Տրոցկու հայտարարությունը հոկտեմբերյան պլենումում):*

Վո՞րպիսի զզվելի և կեղծավոր բամբասանք կուսակցության հասցեյին, մինչև վո՞րտեղ և գլորվել տրոցկիստական ոպպողիցիան: Այդ ասածներից պարզվում է, վոր լենինյան շտար Համեկոմկուսի կենտրոնը ըստ տրոցկիստների հանդիսանում և մեր յերկրի սեփականատեր կապիտալիստների կառավարող խմբակը, իսկ կուսակցությունը սեփականատերերի կուսակցությունն և հանդիսանում, վորը ճնշում և զործ դնում պրոլետարական այսպես կոչված ավանդարդի վրա՝ այսինքն տրոցկիստական ոպպողիցիայի վրա: Այնուհետեւ խոսվում երանվորների «վախի» մասին, վոր նըրանք չեն ասում այն, ինչ մտածում են: Դա բացարձակ սուս և զեկալարող կուս. որդանների և մեր կուսակցության հասցեյին, վորը չի համապատասխանում մեր կուսակցության պրակտիկային և վորով ոպպողիցիան ցանկանում և շղարշել իր խայտառակ պարագությունը,

*) Ընդգծումները մերն են Ս. Մ.

կորը նա կրնց ներկուսակցական վերջին պայքարի ընթացքում:

Բանվոր կոմմունիստները—լենինյան բազմաթիվ շարքերը ճիշտ կերպով են հասկանում իրենց նպատակը: Նրանք լավ գիտեն, վոր վոչ թե լենինյան զեկավարող շտարն և հենվում բյուրոկրատների, սեփականատերերի և այլ նեպմանական տարրերի վրա, այլ հենց տրոցկիստներն են, վոր ցանկանում են դրանց հետ միասին խեղդել պրոլետարական դիկտատուրան և նրա կուսակցությունը՝ արտացոլելով նրանց տրամադրությունները մեր կուսակցության ներսում:

Ոպպողիցիայի մյուս զեկավարը՝ Զինվոյեվը՝ հոկտեմբերյան պլենումում արտասանած իր վոչ պակաս ցինիկ ճառի մեջ հայտնում է, վոր ստավինյան «ղեկավարության» (իմա՞լենինյան) հատկությանն և վերադրվում:

«Կուսակցության անդամների անսեղյակ պահելը մեր խական տարածայնություններից, ապարատը անում և բոլոր հնարավորը և վոչ հբնարավորը, վորպիսի խեղաքյուրի տարածայնությունների իմաստը: Յերկու տարի գուք մեզ չեք թողել խոսել կուսակցության հետ: Դրանից կուսակցությանը ոգուտ յեղե՞լ է: Վոչ: Կուսակցությունը յերկու տարի տանջվել է: Տանջվել է վոչ միայն ոպպողիցիան, այլ հենց ամբողջ կուսակցությունը: Այժմ Դուք ցանկանում եք նույն բանը անել դարձյալ յերկու տարի: Իսկ տարածայնությունները այդ ժամանակում ավելի յեն խորացել և դարս յեկել, յեթե կարելի յե

այսպես արտահայտվել, փողոց, մասսաների մեջ, սկսվել է քափվել (ուրեմն այսպիսի կուսակցություններից) կուսակցություններից բանվոր դասակարգի մեջ, յերկու աշխատավորության լայն մասսաների մեջ»*)

Ճիշտ է արդյոք, վոր մեր լենինյան կենտրոնական կոմիտեն կուսակցությունը չի տեղեկացրել մեր իսկական տարածայնությունների մասին: Դա սույն է ու սուրառություն ամբողջ կուսակցության հասցեյին: Հասպատ ի՞նչ ե արել կոսակցությունը ուղղողիցիայի յիրկու տարվա գրգիւի գործունեյության ընթացքում: Լռել է արդյոք կուսակցությունը և նա չի՝ քննել արդյող Տըրոցի Զինովյեվյան և Սալբանով-Մմիոնովյան ուղղողիցիայի կազմակուծիչ Փրակցին գործունեյության ինդիքը: Մենք պատասխանում ենք՝ այս քննել ե: Մեր ժամուլի եջերում կուսակցությունը բոլոր այդ հարցերը լուսաբանել ե: Կուսակցությունը անց է կացրել այդ հարցերի ուսումնասիրությունը բոլոր բջիջներում, վերջապես կուսակցությունը ծանոթացել է այն գիտելիքի հետ, վորը մեղանից շատ մեծ ժամանակ ու ենթագիտ յի խիել, վորը փաստորեն անց է կացվել Համեմատկուսի կենտրոնը և ԿՎՀ-ի բոլոր պլենառմներում: Կուսակցության ստորին կազմակերպությունները կարգացել են պլենառմների այդ բոլոր սպազրությունները, վորոնք տպվում են հազարավոր որինակներով:

Մի՛թե այդքանը բավական չեն: Կուսակցությունը բոլորը վորոշակի կերպով գիտե և նա ժամանակին ցույց է տվել իր վերաբերմունքը ուղղողիցիայի ոպորտյունիստական հարձակումների վերաբերմամբ:

*) Բնդդժումները մերն են Ա. Մ.

Տըրոցիներն ասում են, վոր «Պրազվեայի» եջերում դիսկուսիան «միակողմանի» և տարվել, դա ճիշտ չե: Կուսակցական մամուլում բերվել են շարունակ մեջբերումներ տրոցկիստական դղվելի արևենալից: Այդ ցիտատները բավական եյին դադարիար կազմելու համար տրոցկիստական ուղղողիցիայի մենչեվիկյան Փիդինոմիայի մասին: Անթույլատրելի յի պահանջել անկարելին, լավագույն դեպքում դա կը լիներ կոսիտ սխալ, կուսակցության 10-րդ համագումարի վորոշումների խախտումը: Լենինյան կուսակցությունը վուս մի անդամ այդ չի ցանկացել և չի ցանկանում, մանավանդ այն լարված պայմաններում, վորում ապրում և կուսակցությունը և մեր յերկիրը՝ ներկուսակցական պայրարի այս յերկու տարրում:

Կուսակցությունը ասել ե, իսկ գիտելիքան վըձռականորեն ընդդում ե, վոր մեր կազմակերպությանը ցնցել և տանջել և հենց ինքը ուղղողիցիան: Ուղղողիցիան ե, վոր մեր կուսակցական տարածայնությունները փողոց են գուրս հանել՝ խախտելով կուսակցական և խորհրդային լեզարությունը՝ պլուտոսարական գեմոկրակատիքան, որյեկտիվորեն կյանքի կոչելով հակախորհրդային ուժերը: Հայտնի «Ալլատֆորմայի» տարածումը անկուսակցականների շրջանում, կուսակցական դոկումենտների տպագրությունը անկուսակցականների, հակախորհրդային ինտելիգենցիաների հետ և վերջապես հակախորհրդային բացահայտ յելույթը՝ դեմոնստրացիան Մոսկվայում և Լենինգրադում, ակրնհայտ կերպով ապացուցում են, վոր այդտեղ մեղավորը ամբողջովին ուղղողիցիան ե: Առաջին հերթին մեղա-

վոր են Զինովյեվը, կամենել և Տրոցկին, վորսնք լինիյան կուսակցության շտաբ Կենտկոմից նրա կազմակերպության պառակտման աղջանչանն են տվել:

Լենինգրադի կուռ. կազմակերպության ուղղված մի համակում գրված Զինովյեվի ձեռքով, 23 թվի թեկտեմբերի 15-ին դեռ յերբ վոր նա մեկն եր կոմմոնիստական կուսակցության ղեկավարներից կարդում ենք.

«Մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեն չի կարող կարծիքների պարլամենտի վերածվել... Մեր կուսակցությունը պետք է մնա այնպիս, ինչի վոր նա կոչված է:

Պրոլետարիատի ավանդարդ մեր բոլշևիկյան կուսակցությունը ձուլված է մի կըտորից, մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեն վայելում և նրա անբաժան աջակցությունը և վստահությունը... Կուսակցության միասնականությունը մնում է մեր հիմնական խնդիրը։ Մեր կուսակցության միասնականությունը պետք է անսասան մնա։ Վոչ մեկի չ'թույլատրել տատանել մեր կուսակցության միասնականությունը—դա այն է, վորին ստացին հերթին սովորեցրել ե մեզ Լենինը»։^{*)}

Կուսակցության 13-րդ համագումարին՝ մայիսին 1924 թվին իր յերրափակման ճառում զեկուցումից հետո Զինովյեվը տուժել է.

«Զիս աշխարհում այնպիսի մարդ, վորը կա-

լադանաբ պառակտել մեր կուսակցությունը։ Յեկ չկա այն խմբակը, վորը կարողանար պառակտել մեր կուսակցությունը. ինչպես ել նա իրեն չ'անվաներ»։^{*)}

Մեր լենինյան կուսակցությունը պատրաստ է յերկու ձեռքով ստորագրել այս փաստացի դոկումենտները։ Մեր կուսակցությունը միշտ ասել է և հիմա ել կրկնում է նոր ոպագողիցիքին հենց այն, ինչ վոր Զինովյեվը և Կամենելը ասել են 23-24 թվերին արոցկիզմի դեմ, այն ժամանակ, յերբ վոր նրանք գտնվում ելին լենինյան վոչ միայն սոսկ շարքերում, այլ և նրա ղեկավար շտաբում։ Զինովյեվը և Կամենելը կուրացած Փրակցիոն պայքարով՝ անխուսափելիորեն ընկան հակալենինյան լադերը, այն լադերը, վորի դեմ նրանք պայքարել են յերկար տարիների ընթացքում կուսակցության հետ միասին։ Նրանք միլիոն անդամ ավելի վատ գործ են կատարում, քան այդ արել և 23-24 թվին արոցկիստական «Հին» ոպագողիցիան։ Նրանք այսոր դուրս են գալիս լենինյան Կենտրոնական կոմիտեյի դեմ ամեն տեսակ բամբասնքներով, խարեբայական մեղադրանքներով և անտեղի հանդիմանություններով։

Նրանք մեղադրում են մեր կուսակցությունը կուրության և անգրագիտության մեջ, յերկրի և կուսակցության առաջ կանգնած խնդիրները չհասկանալու մեջ։ Այդ յերկու մեր նախկին ընկերները 24 թվին մինելով կուսակցության անսասան միասնականության կողմնակից, վոչ վոքի թույլ չ'տալով խախտելու կու-

^{*)} Հնդկացումները մերն են Ս. Ա.

^{*)} Տես «„Լогика фракционной борьбы“ (Каменев и Зиновьев против Троцкого) ст. 81, 82.

սակցության միասնականությունը, դերի ընկան Տը-
րոցկուն և նրա մենչեվիլիյան փիլիսոփայությանը։ Յեզ
դրանից հետո համարձակություն ունեն դուրս գալ և
խոսել բանվորների անունից, կուսակցության անունից,
իրականում դեմ դնալով բոլշևիլիյան միասնականու-
թյան՝ կուսակցությունը դարձնելով «կարծիքների պար-
ուածնությունը տեսակի խմբավորումների և Փրակցիս-
ների համար։ Յեկ, յերբ կուսակցությունը պատասխա-
նում է նրանց այդ աշխատանքին իրենց հենց 24-թվի
լեզվով, այդ ժամանակ նրանք չլսված բամբասանքներ
են չպրոռում կուսակցության լենինյան դեկավարու-
թյան հասցեյին։

Այդ բոլորի համար ոպպողիցիալին ծափահարում
են բոլոր տիպի հակասորհրդային ուժերը՝ սկսած մո-
նարիստաներից մինչև մենչեվիկները և դաշնակցական-
ները, վորոնք այս կամ այն ձեվով ասում ու կըրկ-
նում են ինչ վոր ոպպողիցիան ասում և մեր դեկավար
մարմինների հասցեյին։

Ահա մի նմույն դաշնակցական այդ «դոհարաբնե-
րից», «Հուսարիք», № 102, 27թ., կարգում էնք.

«Բոլշևիկյան պետությունը բանության ու
դիկտատորայի կազմակիրարյունն է վոչ մի-
այն ուսւ յերկրի և անոր բարը ժաղավորդներուն
վրա, այլ և բանվոր դասակարգի ու մինչև իսկ
համայնավար կուսակցության վրա։

Ուսւ յերկրի միակ տերը Համայնավար կու-
սակցության հինգանդամ Պոլիտրյուրն ե, վոր
հենած ամենազոր ԳՊՈՒ-ին (Զեկա)՝ իրեն

յենքակա կը պահե և կուսակցություն և ժողո-
վուրդ և յերկիր»*)

Սակայն վերջին յերկու տարվա ընթացքում մեր
կուսակցության հասցեյին արած այդ զբարտիչ ամ-
բաստանությունները մեկ անգամ չեն, վոր տապալիքել և
յերգվել են Համկոմկուսի լենինյան շարքերի միասնա-
կան կամքի գորությամբ։ Սառըն բջիջներում, ամենու-
րեք ոպպողիցիոններներն ամենաչնչին փոքրամասնու-
թյունն են կազմում։ ոպպողիցիան ձայն և տալիս վոչ
ալելի քան յերկու, վեց, և առավել տաս մարդ։ Ոպ-
պողիցիոններներն անզոր են կուսակցության, լենինիստ-
ների բազմահազար զորայունների վզին փաթաթել ի-
րենց հակակուսակցական և վոչ լենինյան տեսակետնե-
րը։ Լենինյան կուսակցության բջիջների բանվորները
շատ լավ դիտեն թե Տըրոցկուն և թե Զինովյեվին ի՞նչու-
համար հեռացրին կուսակցության կենտկոմից և կու-
սակցությունից, այդ բանում ոպպողիցիոններները չեն
կարող խաբել կուսակցությանը։ Բայց վիկիկ բանվոր-
ները շատ լավ են կարողանում տարբերել սոցիալիստա-
կան չինարարության ճանապարհին կանգնած դժվարու-
թյունների քննադատությունը և գործնական քննու-
թյունը մենչեվիկյան «քննադատությունից» և սուս ու
խաբեյության կեղծ Փրաղիուտիայից։ Պառակտիչնե-
րը պարտություն պարտության յետելից են կրում։
Խաբեյական ճանապարհով հաս ու կենա տրոցկիստներ
մուտք դուժելով կուսակցական կոնֆերանսները Յերե-
վանում և այլ քաղաքներում, մի ավելորդ անգամ ևս
փորձ արեցին ցուցադրելու համար իրանց «ճշմարտու-

*) լնդգծումները մերն են Ս. Մ.

թյունը»՝ կուսակցության մեջ և յերկրի ներսում տիրող գրության վերաբերմամբ, սակայն, կոնֆերանսները նրանց լսելով՝ միահամուռ ջանքերով այս անդամ ևս արժանի հարվածը տվին նրանց :

Բանվորները համոզվեցին, վոր տրոցկիստական ուղղողիցիան կուսակցությանն առաջնորդում և գեղի պառակտումը, վոր նրա գործունելությունը նպաստում և հակահեղափոխական կազմակերպություններին, վոր տրոցկիզմը առաջնորդում և պրոլետարիատի դիկտատուրան և ՀԿԿ-ն դեպի կործանումը և վերջապես, վոր տրոցկիզմը «Հույս» և ներշնչել ամբողջ հակահեղափոխական բանակին, Խորհրդային իշխանության «մոտարուտ» կործանման մասին և վոր ինքն ել չդիտե թե ի՞նչպես և ընկել այժմ պրոլետարիատի դիկտատուրայի հակառակորդների բանակը :

Կուսակցությունը չառ լավ և տեսնում, վոր միջազգային հակահեղափոխությունը և իմակերիալիստական Յեվրոպան գեռ յերբեք այդքան լարված և «կենդանացած» չեն յեղել և «Հույսերով» թեվավորված՝ ինչպես այժմ : Ուստիեայլովցիներից սկսած և մինչ դաշնակցականները ներառյալ, բոլոր գույնի և յերանգի հակահեղափոխականները իրենց հայացքներն են ուղղում դեպի տրոցկիստական ուղղողիցիան և ձգտում համագործակցության ձեռք պարզել նրան՝ պլութարիատի դիկտատուրայի և ՀԿԿ-ի դեմ պայքարելու համար :

Պատահական յերեվույթ չե այդ իսկ պատճառով, վոր հատկապես հենց հիմա յե ակտիվացել հակահեղափոխությունը՝ «Հուսարով» վոր Խորհրդային իշխանու-

թյան և ՀԿԿ-ի «վախճանը» մոտ ե և մեծ տագնապով ըսպասում ե և հետեւում ուղղողիցիայի «հաջողություններին»—պլոտոր ջրերում ձուկ վորսալու նպատակով : Բոլորը միաբերան աղաղակում են ՀԿԿ-ի և Խորհրդային իշխանության «տերմիորի» մասին, համերաշխվելով տրոցկիզմի հետ : Սպիտակեմիգրանտական մամուլը լեցուն և այժմս ուղղողիցիայի հասցեյին արած կոմպլիմենտներով :

Բուրժուական մամուլը, ուղղակի գրում և վոր՝
«...Միայն այժմ կարելի յե վստահել վոր Խորհրդային ռեժիմը կը տապալվի սոսկ վորպես հետեվանք հեղափոխական կուսակցության թերևն դանդաղընթաց, սակայն՝, անժխտելի քայլայման պրոցեսում : Տրոցկին իր համահարզներով կումբունիստական այդ փորձերն առավել դաժան հնարդառության յենքարկեց, քան թե խորհուրդների ամենավոլուսերիմ թշնամիները :

Խորհրդային իշխանության 10-րդ տարվա ընթացքում հակահեղափոխությունը անտարձկույս հասումանում և հենց իր իսկ ուստական կոմիտասակցության մեջ և կարծես արդեն յերեվում ե գալիք անկրան և տապալման նախանքանները :* (Ֆրանսիական «ՏԱՆ» թերթից, «Պորավորվա»-ից № 247 ընդգծումը մերն ե Ս. Մ.) :

Այսպես են զրում բուրժուական թերթերը, արտահայտելով տրոցկիստական ուղղողիցիայի գործունելության վերաբերմամբ իրենց տածած «Հույսերի», «միիթարիչ» նշանները :

*) Ընդգծումները մերն են Ս. Մ.

Յեթե անցյալներում ինչպես բուրժուական, այնպես և սոցիալ դավաճանական մամուլը—նրանց թվում դաշնակցականներինը—ՀԿԿ և պրոլետարիատի դիկտատուրայի դեմ իրենց զրապարտիչ գրոհների պահին հարկադրված եյին ոգտվել իրենց շինծու «օնեփական թղթակիցների» նյութերից, ապա ներկայումս նրանք ոգտվում են այն մարդկանց աված նյութերից և ասածների ու գրածների մեջքերումներից, վորոնք հավակնություն ունեն «ռուղղահավատ բայլշեվիկները և իսկական» լենինցիներ կոչվելու։ Բուրժուական մամուլը, միջազգային բովանդակ հակահեղափոխության մամուլը խնամքով և ջանառությամբ մեջքերումներ են տալիս Տրոցկուց, Զինովյեվից, Սավրոնով-Սմիռնովից և այլ ոպողիցիններներից, ամբողջ այդ մամուլն իր համակրությունն և հայտնում տրոցկիզմի պայքարին՝ ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի և ՀԿԿ-ի։ Յերբ կարգում ես սպիտակ դվարդիական այդ մամուլը և հետեւում ոպողիցիայի պայքարի պրոցեսին մեր յերկրում, ապա այն տպավորությունն ես ստանում՝ թե այստեղ հակախորհրդային բանակի մի ընդհանուր միասնական ճակատ գոյություն ունի այն տարբերությամբ միայն, վոր դերերը խստիվ կերպով այնպես են բաժանված ոպողիցիայի և սպիտակ բանակի միջև, վոր ոպողիցիան զրոհ է տալիս պրոլետարիատին դիկտատուրային և կուսակցության դեմ ներսից, (ոբյեկտիվորեն անկախ այն հանդամանքից, թե կամենում ենա այդ անել, թե չի կամենում, դժբախտաբար դեռևս զուրկ չլինելով այդպես վարդելու հնարավորությունից) սպիտակ պարդիական բանակը կատա-

րում և նույն բանը՝ ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս, արտաքին աշխարհից կազմակերպելով նույն գրոհը։

Ինչքան ել վոր ցավալի յե, սակայն այդ ըլությունը պարզորուց կերպով արտահայտված և ոպազդիցիայի ամբողջ գործունեյության մեջ և միանգամայն արդարացի եր ընկ։ Ստալինը, յերբ նա իր ճառերից մեկում հիշատակում եր, վոր՝ Զեմբքերենից սկսած մինչև Տրոցկին բոլորն ել միասնական ճակատով հարձակել ևն ՀԿԿ-ի և ԽՍՀՄ-ի վրա։

Ամբողջ սպիտակ եմիգրանտական մամուլը և բուրժուական միտքը՝ Դանից-Արբամովիչներից սկսած մինչև «Պասլեղնիյե Նովստի»՝ կենտրոնացած են տրոցկիստական ոպողովիցիայի «գուշակությունների» վրա։ Յաւոր թերթերը լեցուն են ոպազդիցիային նվիրված գովասնական հողվածներով։ Նրանք բոլորն ել մեջ են բերում «Բայլշեվիկ-լենինցիների» «բարեխիղմ հայտնությունները» (ոպազդիցիաներների)՝ արդարացնելու համար, իրենց զարշելի զրաբրտությունները կուսակցության և Խորհրդային իշխանության դեմ։ Այդ «նախագուշակությունները», նրանց կարծիքով, ամենասուղղիլ և անկեղծ «գուշակություններն» են, քան թե ՀԿԿ-ի կենտրոնական որգան «Պրավդայի» պոլեմիքական սպավաներն։ Մենչեվիկյան «Սոցիալիստիչների վեստնիկը» առանձնահատուկ վոգեվորությամբ և մեջ բերում Հ.Կ.Կ.-ի և Կվ.Հ.-ի ոգոսոսոյան պլենումին Տրոցկու արած այն հայտարարությունը՝, թե՝ «այրութարիատն ավելի ու ավելի յե կծկվում, զիջելով իր տեղը այլ դասակարգերին, վորոնք ավելի և ավելի յեն ծավալում» :*)

*) Ընդդումը մերն ե. Ս. Մ.

Նույն բանը Զինովյեվը կրկնում է 1927 թվի հոկտեմբերյան կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումին, առելով՝ «Ստալինյան զեկալարության» «իմա լենինյան Ա. Մ.) մասին հետեւյալը»:

«Սխալը սխալի յետեվից, պարտությունը պարտության յետեվից»* Հետեւյանքը՝ քաղաքական սնանկություն»:

Հենց միայն այս վերջին յերկու ցիտատները, վորոնք ավելի ու ավելի համոզիչ կերպով են դրսեվորում տրոցկիստական ուղղողոցիայի կերպարանքը, բայց կան են արդեն Աբրամովիչի և նրա կամպանիային, վորոնքի հնարավոր լիներ հարություն տալ հանդուցյալ Մարտովի մենշևիկական բացահայտ պարտվողական այն փիլիսոփայության, վոր Մարտովը գեռես 1921 թվին նույն «Սոցիալիստիչեսկի վեստնիկի» եջերում արտահայտել է, գնահատություն տալով պըունտարիստի կացությանը Խորհրդային Միության մեջ.—

«Իուսական պրոլետարական հեղափոխությունը պարտություն պարտության յետեվից է կրում»:

«Հոչակավոր» այս գնահատությանը միացավ նաև տրոցկիստական ուղղոցիան 1927 թվին՝ սոցիալիստական շննարարության ասպարիզում, պրոլետարիստի կողմից կատարված տասը տարվա համառ աշխատանքից հետո: Տրոցկին և Զինովյեվը մեկ անդամ չեն, վոր պատկերացրել են պրոլետարիստի և պրոլետարական հեղափոխության «պարտությունը» մեղանում:

Այս մասին Տրոցկին խոսել է գեռես Կոմինտերնի

*) Ըստգծումներն մերն ե. Ս. Մ.

Իործկոմի մայիսյան պլենումի ժամանակ, սակայն, այդ ամենը սոսկ մենչև միկական փելիսովայական կը ըկնողություն է, վոր վոչինչ չունի ընդհանուր իսկական իրականության հետ: Մենչեվիկներն ուրախությամբ ողագործում են տրոցկիստական զինանացից դաշտ յեկող ամեն մի հայտարարություն, վերցնելով այդպիսին իրենց սպառագիտանության տակ և միանգամայն իրավացիորեն են պնդում, վոր տրոցկիստներն այժմ կը ըկնում են այն, ինչ վոր իրենք մենշևիկները շարունակ են բաղմից պնդելիս են յեղել:

38080 (2)

Սակայն, մենչեվիկները մոռանում են, վոր կոմունիստական կուսակցությունն աճել և ամրակուռ և դարձել ամեն գույնի և ամեն արտահայտության մենչև միզմի դեմ պայքար մղելով և այն հանդամանքը, վոր տրոցկիստներն այժմ մենշևիկական ստորություններն են կրկնում, բնավ չի ամրապնդում մենշևիզմի դիրքերն, այլ ընդհականակը՝ տրոցկիստական ուղղողիցիային մատնում և անխուսափելի կործանման և պարտության: Պատմականորեն մենշևիզմը դատապարտված է մեկ պարտությունից դեսպի մյուս պարտությունն ընթանալ, մինչդեռ բայց շեմիզմը դորավորվում է վոչ միայն պրոլետարական դիկտատորայի յերկրում, այլև համաշխարհային մասշտապով, անկախ այն հանդամանքից, թե բայց շեմիզմի դեմ պայքարելիս մենշևիզմն ինչ հնարքների յեգինում:

Բանվոր գասակարդի անունից ճառող ուղղողիցիաներներն այնքան են իրենց կատերը կտրել բանվորական մասսաներից, վոր բացարձակորեն դեմ են դուրս գալիս նրանց չահերին, ճիշտ այսպես կնչպես միջազգա-



յին մենչեվլիզմը։ Ապագողիցիայի դիմակը պատռվում է 7-ժամյա բանվորական որվա մասին ունեցած նրա պրո-վակացիոն հայտարարություններով։

«12-ի» (Սապրանով-Միլնովի խմբակը) հայտա-րարության մեջ (կուսակցության կենտրոնին) Առո-հուրդների կենտրոնի վորոշումը 7-ժամյա բանվո-րական որվա մասին, անվանվում է «տաքտիկական մանյովը»— «գատարկ խոստում»— վերջապես ուղ-ղակի ասված է։

«Այդ «յերկնեում գոնված կոռունկով» Կենտ-կումն ուգում է զինել բանվոր դասակարգի լուս-թյունն այն ժամանակ, յերբ նա պետք է հաշիլ տեսնի նրանց հետ, վորոնք անց են կացնում կոռ-սակցության մեջ պրոլետարական գիծը և պաշտ-պանում բանվորների շահերը»*):

Այդ նույն հարցի մասին իրեն միանդամայն կոր-ցրած Զինովյեվն ասում է՝

«Ինչպես դուք գիտեք շատ փորձեր են յե-ղել հանդիմանել մեզ դեմագոգիայով։ Յես պըն-դում եմ, վոր ավելի դեմոգոգիկ, ավանոյու-րիստական առաջարկություն, քան այդ 7-ժամ-յա բանվորական որվա առաջարկությունն է, մեր կուսակցության պատմության մեջ դեռ չի յե-ղել»*):

Մեջբերումները անում ենք ընկ. Մոլոտովի ար-տասահմած ճառից Մոսկվայի կազմակերպության ակ-տիլում, 26 հոկտեմբերի 27 թ. «Պրաда» № 250.

*.) Հնդգծումը բնագրում։

Վոզինչ, լավ դեմագոգիա յեւ—բանվորական որվա կրծատման այդ վորոշումը, վորը հետզհետե կիրառ-վում է կյանքում։ Յեվ վերջապես Զինովյեվը հայտա-րարում է՝

«Յես առաջարկում եմ 7-ժամյա բանվորա-կան որվա հարցը, այն դեմագոգիկ ձեվով բան-վորության հետ պատասխանառու խաղը՝ հանել նրա համար, վորպեսզի չխայտառակենի մեր կուսակցությունը»*։

Այժմ բոլոր բանվորները կհիշեն, թե ոպպողիցիան ինչպիսի վերաբերմունք ցույց տվեց 7-ժամյա բանվո-րական որվա խնդրին։ Ապագողիցիան կենտրոնի ֆրակցիայի դեմ քվեարկեց մանիֆեստին և մասնա-վորակես 7-ժամյա բանվորական որվան և այնուհետեւ պլենումում ոպպողիցիայի բոլոր անդամները դեմ յե-ղան այդ առաջարկությանը։

Այդ քվեարկությամբ ոպպողիցիան ստեղծում է մի խոր անգունդ իր և բանվորական մասսաների միջև։

Ինչո՞վ ե տարբերվում ոպպողիցիայի այդ վերա-բերմունքը դեպի 7-ժամյա բանվորական որը, նրա-նից՝ ինչ ասել ե «Ֆորվերստ»-ը մանիֆեստի առթիվ։ «Ֆորվերստ»-ը հոկտեմբերի 18-ի համարում, «Մոսկ-վայի հոբելյանական նվերը» հոդվածում խոսում է 7-ժամյա բանվորական որվա մասին հենց մեր ոպպողի-ցիայի վորով։

«Արդյունավործական բանվորների համար 8-ժամյա բանվորական որվանից 7-ժամյա բան-վորական որվա անցնելու խոստումը, կխարի

*.) Հնդգծումներն մերն են։

միայն նրանց, վորոնք չգիտեն ոռւսական պրոֆ-
մությունների բազմաթիվ հաշվետվություն-
ներից, վոր Խ.Ս.Հ.Մ. Տ-ժամյա բանվորական
որը գոյություն ունի միայն քդրի վրա և վոր
արդյունագրծության յուրաքանչյուր բնագա-
վառում, վորը գտնվում է բարենպաստ
կրնյուկուրային պայմաններում, բանվորները
պետության կողմից հարկադրվում են աշխատել
անվերջ արտաժամեամերի ընթացքում»*):

Դժամյա բանվորական որը հանդիսանալով Հոկ-
տեմբերի հիմնական նվաճումներից մեկը, ունենալով
Ռուսաստանի բանվորական շարժման համար խռով նը-
շանակություն՝ շարժեց միջազգային մենչեվիդների և
միջազգային կապիտալիզմի զայրույթը։ Այդ հոսանք-
ներին պատկանող թերթուկներն սկսեցին կատաղի վոռ-
նոց բարձրացնել, վորոնց գիրիժորը հանդիսացավ ոպ-
պողիցիան և զարմանալի չեր, վոր մենչեվիկյան «Ֆոր-
վերտա»-ն իր խմբագրական հոդվածը վերնագրել և
ՅԵՎ.ԴԱԿԻՄՈՎԻ «նշանավոր» հայուսարության հա-
մաձայն, թե Խորհուրդների սեսիայի Փրակցիայում և
թե Հոկտեմբերյան պլենումում։

Տրոցկիստական ոպպողիցիայն քանիցս մեղադրել
և մեր կուսակցությանը և Խորհրդային իշխանությանը
«Ռւսարյալովչչինայի» մեջ, բոլորովին չնկատելով, թե
ինչպես հենց ինքն և ոբյեկտիվորեն ընկել ուստրյալով-
յան փիլիսոփայության գիրկը։ Ուպողիցիան քանիցս
հավաստիացրել ե, վոր Ռւսարյալովը՝ բուրժուական
նեղմանյան իդեոլոգը՝ կողմնակից և «Ստալինյան

ղեկավարության» Խորհուրդների յերկրում և վոր Ռւս-
արյալովը գովաբանում է ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ Կ.Կ.-ի ղե-
կավար գիծն ու քաղաքականությունը։ Ֆրակցիոնական
ուայքարից կուրացած ոպտողիցիան չի նկատում, վոր
կրկնում և չկկկի-ին և պրոլետարական ղեկտատուրայի
հասցեյին նետված ստորությունները և նույն զրաբր-
տիչ ամրաստանությունները, թե Խորհրդային պետու-
թյան սիստեմն ապրում և իր «տերմիգորը», վերածվե-
լով բուրժուական պետության, այսինքն այն զրաբր-
տությունները, վոր անում եր Ռւսարյալովը, ղեռես
21—23 թվականներին։

Տրոցկու հայտարարությունը «կծկվելու» և «ծա-
րավելու» մասին վոչ այլ ինչ ե, բայց յեթե մի մեղա-
դրանք, վոր շպրտվում է չկկկի-ի յերեսին։

Բայտ Տրոցկու պրոլետարական պետությունը դա-
դարել և պրոլետարիատի շահերին ծառայելուց, կոմ-
կուսակցությունն այլևս պրոլետարիատի կամքի և
ցանկությունների «արտահայտությունը» չե և վերջա-
սկիս մեր պետությունն ըստ եյության պրոլետարական
սոցիալիստական պետություն չե։

Այդ մեղադրանքներն ավելի ուղղակի և բացահայտ
կերպով են առաջադրում, այսպես կոչված «ձախ» ոպ-
պողիցիան (Սավրոնով-Ամիրնովի խմբակը) վորից չեն
հրաժարվում և աջակողմյան արցոկիստները։ Զետա-
քրքիր և ականջ դնել նախ Ռւսարյալովին։ Հենց նույն
այդ խնդիրների վերաբերյալ ահա թե ինչ ե գրում
նա ղեռես 21—23 թվի մեր պետության բնավորության
մասին։

«Իր սոցիալիստական եյությամբ հեղափո-

*.) Ընդդումները մերն են Ս. Մ.

խական Առուսաստանը բուրժուական ուեփականու-
տիրական յերկրի յե վերածվում» :

«... Զի կարելի չընդդեմ, վոր ներկայիս
Կոմունիստական Առուսաստանը այժմյան բուր-
ժուական յելքովայում որյեկտիվորեն ամենից
պակաս չափով ե սոցիալիստական յերկիր հան-
գիսանում»*):

Հապա ինչ է ասում Սովորանո-Միբնովի խմբի 15-ի
Հայտարարությունը.

«Իր (Համ. Կենտ. Կոմի. Ս. Մ.) սխալ քա-
ղաքականությամբ վերջին յերեք տարվա ընթաց-
քում ապահարանի բացասական կողմերը մեծ չա-
փով ուժեղացել են: Մանր բուրժուազիայի ազ-
դեցությունը մեծ չափով մեծացել է, կուլակը
բաղաքական իրավունքները և ստացել (Խոր-
հուրդներում) «բյորոկրատիկ խեղաթյուրում-
ներն» այժմ այնքան հեռու յեն գնացել, վոր նը-
րանց մեջ արգեն ակներել կերպով մանր բուր-
ժուական վերասերման տարրեր են զգացվում» :

Եռոյն և Հայտարարում Տրոցկին Ոգոստոսյան պլե-
նումում արտասանած իր ճառով, վորը գալիս և ապա-
ցուցելու այն փաստը, վոր տրոցկիստները չեն հրաժար-
փում իրենց «Ճախ» թեվից.

«Վերջին ամբողջ շրջանի եյությունն այն է,
վոր պրոլետարիատը բաղաքականապես կըծ-
կվում է, իսկ մնացյալ դասակարգերի գործու-
նեյությունը ծավալվում է, ճիշտ այնպիսում

*) Հսդգծումներ մերն են Ս. Մ. Ի. Եսքարին.
«Цезаризм под маэкой революции» էջ 15-16

ինչպես նյութական ասպարիզում ընդարձակ-
վում են վոչ պրոլետարական դասակարգե-
րը. այդ բանը տեսնում ենք ամեն տեղ.
քե փողոցում, քե խանութներում, քե յե-
լեքսարաֆարշի վագնիում և քե բնակարաններում,
նույնպես և բաղաքականության մեջ այժմ պրո-
լետարիատն ամբողջովին կծկվում-սեղմվում է,
իսկ մեր կուսակցության ոեժիմն ավելի ու ավե-
լի յե ուժեղացնում պրոլետարիատի դասակար-
գային կծկումը»:*

Սապրոնով-Միբնովի «Ճախագույն» գրուպան ցի-
նիկորեն գալիս և բացահայտ կերպով հաստատելու և
հասցնելու իր տրամաբանական վախճանին Աւստրյալո-
վի «գուշակությունները» հանդիսանալով նրա գուշա-
կությունների» մունետիկը: Կենտկոմին տված «12-ի»
Հայտարարության մեջ կարդում ենք հետևյալը.

«Համագումարի նախորյակին ռեպրեսիա-
ները ուղարկվեցիայի գեն նշանակում են, վոր յու-
րաքանչյուր կուսակցության անդամի, վորը կը
համարձակվի նախահամագումարային կամպան-
իայի ժամանակ Բննադատել կենտկոմի ոպոր-
տյունիստական գիծը, կուսակցությունից հե-
ռացում և սպանում, խուզարկություն, բանո-
կենուկումը, վորը համագումարում կուսակցու-
թյան առաջ հաշիվ պետք է տա իր գծի մասին,
հենց համագումարի նախորյակին կուսակցու-
թյունը դնում է կվ. և ՊԲ. կրապարական և

*) Բնդգծումներ մերն են,

վոչ հրապարակական հսկողության ներքո : Կուսակցության և նրա բարձրագույն ռողան—համագումարի այդ շլաված նշանակումը, բացահայտ կերպով ցույց է տալիս, վոր պիտական հեղաշրջման ուղին, վորը բռնել է կենտկոմը, դրա հետ միասին նաև կուսակցությունը լիկվիդացիայի յենքարկելու ուղին է :

«Թող նա (կենտկոմի պեհումը) իրեն պարզ հաշիվ տա, վոր սկաված պիտական հեղաշրջումը՝ հակահեղափոխական ուղի հ>*) :

Կոմիտասարիաներն այլ լորդ են : Այդ հայտարարությունն ուղղակի հակահեղափոխական-ուստրիալովյան մեկնարանություն է : Այդ հայտարարությունը զուգագիպում և միջազդային սոցիալ-դավաճանական լադերի կարծիքին, վորը համերաշխելով նրանց հետ բացականչում են «Ֆորվերտս»-ի լեզվով հետևյալը .

«Յեթե վոչ գեռ շատ առաջ միայն բոլշեվիկյան դկտատուրայի հակառակորդները, ամենից առաջ սոցիալիստները, խոսում ենին Խորհրդային իշխանության տերմինորական վերամերժման մասին դիկտատորայի բոնավարտիստական ծայրից սկսյալ վտանգի մասին, այժմ մենք տեսնում ենք, վոր այդ նույն պեղումները և մեղադրանքներն ավելի ուժեղ և ավելի ազդու բարձրացնում են իրենց ուղղողիցին կոմմունիստիկ կողմից»**) :

*) Բնագումը մերն ե. Ս. Մ. առ Մոլոտովի հառը «Правда» № 250.

**) «Правда»-ի առաջնորդող № 199.

Ետաքետաքրական և մի տեսակետ ևս, վոր արտահայտված և «Սոցիալիստիչների վեստնիկի» մեջ հունվար 15-ին 27 թ. համար 1, վորը թեպետ եւ հին և թվում, բայց այնուամենայնիվ ցայտուն կերպով պատռում է մեր ուղղողիցիայի «ձախ» Փրոդոլոդիայի մենչեվիկյան դիմակը և ապացուցում տրոցկիզմի մենչեվիկյան ելությունը .

«Ստալինը և Բուլարինը տանում են ամենայեռանդուն պայքարը վոչ առանց հաջողության, նրա համար, վորպեսզի հասցնեն մեզ ուղղակի բրյումերին առանց դեմոկրատական կարբառեն հանգստության : Տեսեք քե նրանք ինչպես անց կացրին դիմուսիան, ինչպես նրանք լիկվիդացիայի յենքարկեցին մեացած հեղափոխականներին, վորոնք փորձում եյին հավատարիմ լինել հեղափոխական իմբառական իդեաներին» (խոսքը վերաբերվում է 26 թվի ուղղողիցին յելույթներին արցոցիստականների կողմից—Ս. Մ.)

... «Այժմ արդեն հարկ չկա ժամանակ և աշխատանք սպառել ցույց տալու համար այն, վոր բոլշևիկները չստեղծեցին նոր հասարակություն, նոր տնտեսական կերտվածքով—կարդում ենք № 7 նույն թերթիկի եղերում—վորի շրջանակներում տեղի չունենար բանվոր դասակարգի հարստահարսում : Մենք այժմ վկաներ ենք հանդիսանում, սացիալական այն բոլոր խմբալորումների ու դասակարգերի և սոցիալական բոլոր այն հարաբերությունների վերականգնման պրացեսի վերջակորպելուն, վորոնք բնութագը-

բում են յուաքանչյուր բուրժուական—կապիտալիստական հասարակություն :

«Այդ միայն քդրի վրա գոյուրյուն ունի «Խորհրդային սոցիալխոտական հանրապետությունների միություն» իրականում, իհարկե չկա վոչ մի միություն, ինչպես չկա սոցիալիզմ, ինչպես չկան հանրապետություններ, ինչպես չըկան մինչև իսկ Խորհրդայիններ» :

«Խորհրդային Ռուսաստանը անող կապիտալիզմի յերկիր է, և կապիտալխոտական այդ գարգագումը կատարվում է դեսպոտական դիկտատուրայի սեղմվելու տակ» :

Այս բոլորը սակայն, նույնը չեն, արդյոք, ինչ վոր վերջին յերկու տարիների ընթացքում կրկնում է անդադար տրոցկիստական ռազմովիցիան մեր պետության «Քերասերման» մասին, կուսակցությունը «Խեղղելու» մասին և այն ուրիշ «դասակարգերի» ուժի մասին՝ վորոնք «ավելի ու ավելի յեն ծավալվում» ըստ տրոցկիստների։ Պարզ է, վոր Ռուսութաւովը կամ սոցիալդամանները չկերպ կողմնակից չեն, այլ ընդհակառակը, աջակցում և փառաբանում են տրոցկիզմին։ Հետաքրքրական է մի ցիտատ ևս Ռուսարևովից պրոլետարիատի ուժերի «Քծկլելու» մասին վորակեսզի հնարավոր լինի գրսելվուել այն վորոշակի կապը, վորը հաստատվում է նրա և տրոցկիստական ռազմովիցիայի տեսակետների միջև։ Նույն գրքույիի 39-րդ եջում կարգում ենք.

«Կար մի ժամանակ—կոմմունիզմը իսկույն յեվեր—այժմ, վերականգնում է մասնավոր սե-

փականությունը... կար մի ժամանակ—համաշխարհային ինդաստրիալ անվիճապես այժմ որակարգի խնդիր է դիմադարձություն դեպի համաշխարհային կապիտալիզմը և նրա դեմ կովելու եքատրեմիստական մեթոդներից հրաժարվելը։ Կար վերջապես ռազմաշունչ աթեթիզմը, մինչդեռ ներկայում ծաղկում է—կոմպրոմիտ յեկեղեցու հետ» և այլն *) :

Ռուսութաւովը այլպիսով կամենում է ցույց տալ, թե ինչպես են «կծկլում» պրոլետարիատի ուժերը թողէրդային յերկրում և թե ինչպես են «մուտենում տերմիդորին» պրոլետարիատի դիկտատուրան։ Այս տեսակի լկտություններով լիցուն է տրոցկիստների ոպպոզիցիոն վավերագրերը։ Այսնամենայնիվ շատ հետաքըսորական են ևս մի կառը ռազմովիցիոն արսենալից, վորը արտահայտվում է Ռուսութաւովի մտքի եյությունից։

Տրոցկին հոկտեմբերյան պլենումում արտասանած ձառի միջ ճիշտ հետեւյալն է ասում։

«Կուսակցական ուժիմում իր արտահայտությունն է գտնում կուսակցական դեկավարության վողջ քաղաքականությունը։ Այդ քաղաքականությունը վերջին տարիների ընթացքում իր դասակարգային ձողը «ձախից-աջ և միջել» պրոլետարիատից-մասն բուրժուազիային, բանվորից-ավեցը, շարքային կուսակցականից-ապարատչիկը, բատրակից և չքավորից-կուլակը, Չանհայի բանվորից-Զան-կայ-Շիին, Զինական գյուղացուց-բուրժուական սպայություն, անգըլ-

*) Բնդգծումը մերն և Ա. Մ.

իական պրոլետարիատից—Պերսելը, Խիմսը,
Գենսավետչիկը և այլն: Դա ե հենց առաջինիզմի
եյությունը»*):

ՅԵԹԵ դա բառ առ բառ այն չե, ինչ ասում ե Ուս-
տրիխալովը, ապա իր վողով և բովանդակությամբ ան-
պայման համապատասխանում ե նրան: Տրոցկին Ուս-
տրիխալովի մտքերը հասցնում ե իր տրամարանական
վախճանին, յերբ նա համարելով բոլշևիկյան կուսակ-
ցությունը և նրա կենտրոնը բուրժուական, մենչեւիկյան,
իսկ պրոլետարիատի դիկտատուրան կերենսկու և ՅԵ-
ՐԵՄԵԼԻ իշխանությունը, մյուս կողմը քաշելով իրեն-
տրոցկիստական ֆրակցիան համարելով «իսկական բոլ-
շևիկյան» և բանվորական մտքերի և ցանկությունների
արտահայտիչը այս վերասերման չըջանում, նա յեղրա-
փակում ե:

«ԴԵԿԱՎԱՐՈՂ Փցակցիան կարծում ե, թե
բռնության ոգնությամբ կարելի յէ ամեն ինչի
հասնել: Դա հիմնական սխալ ե: Բռնությունը
կարող ե ահաղին հեղափոխական գեր խաղալ:
Բայց միայն մի պայմանով, յերե նա յենքարկ-
ված լինի նիշտ դասակարգային քաղաքականու-
թյան... կերենսկու և ՅԵՐԵՄԵԼԻ բռնությունը
բոլշևիկների վրա, միայն առաջացրին համա-
ձայնողական ոեժիմի պարտությունը: Վանդելով,
գրկելով աշխատանքից, բանարկելով, իշխող
ֆրակցիան գործում ե ջարդելով և կորուլով
(Դյուեմ և բյուեմ) սեփական կուսակցության
դեմ»*):

*.) Բնդգծումները մերն են Ս. Մ.

Ապպողիցիան իդեոլոգիապես արգեն չատ բանե-
րով հասել ե վոչ միայն Ուստրիխալովի գաղափարախո-
սության այլ և մենշեվիզմին, նա այժմ հաճախ ե խո-
սում մենշեվիկյան պրոզայով: Մենշեվիկների լե-
զուն և ոպպողիցիայի լեզուն ավելի ու ավելի
յեն մոտենում իրար, ավելի ու ավելի միանման դառ-
նում: Բավական ե, վոր բերենք միայն մեկը մենշեկի
Ֆ. Դանի ամենավերջին դրվածքներից «Սոցիալիստա-
կան բամբասանքում» տեղալորված հոգվածի քաղ-
վածքը, վոր ապացուցենք վեր հիշված մեր ասածները.

«... Միասնական և միաձույլ չամկոմկուսի
ներսում պայքարը և պլենումից հետո շարունակ-
վում ե մեղմիչի (ուժ սցրնիկ) տակ (ու-
ղում ե ասել թութակի Ս. Մ.) առանց ընդմիջում-
ների: Նրա հատկանիշը, ... ապաշխարության
հայտարարությունների անընդհատ հոսումն ե...
փոքրոցիների հանդարձակի զրշալ իմանալու
ձեվն ե «կրնատման» և «տեղափոխման» վախի
տակ կամ Փթվ.-ի սեվ յերկարի ձեռքով կոկոր-
դից բռնած: Բայց ինչպես յերկում ե անալուկ
հաշիվ մաքրելու այդ մերոդը ոպպոզիայի հետ
կտրուելով և ջարդելով (դյուեմ և բյուեմ) անբա-
վարար ե դուրս գալիս»*):

Այս բոլորից պարզորոշ կերպով հետեւում ե այն,
վոր հանձինս Ուստրիխալովի, Դանի-Աբրամովիչի և
գաղնակների, արոցկիստական ոպպողիցիան ձեռք ե
բերում ամենառուղղահավատ պաշտպանը և գաղնակիցն

*) Ընկ. Մոլոտովի նույն ճառից. ընդգծումը
մերն ե:

այն պայքարում, վոր մղում ե ՀԿԿ-ի կհնտկոմի և պրոլետարական դիկտուրայի դեմ: Այս ցույց ե տարիս միայն այն, թե վորքան անհամապատասխան են իրականության ուղղողիցիայի բոլոր այն ամբաստանությունները, վոր չպրովում են ՀԿԿ-ի լենինյան զեկավար կայանին:

Սակայ չեն ցիտատները նաև սպիտակ-եմիգրանտական-դաշնակցական մամումի մեջ, վորոնք հաստատում են տրոցկիստական ուղղողիցիայի «հայտարարությունները»:

Յեթե մեր կուսակցությունը հաստատել ե արդեն, վոր բուրժուական-մանր բուրժուական կարգի ամեն տեսակ տատանումները կարող են մուտք գործել մեր կուսակցության մեջ ուղղողիցիայի միջոցով, ապա այդ պարզից ել պարզ ե դառնում, յերբ մենք նկատի յենք առնում, թե ինչպիսի դիրք են բանում տրոցկիստական ուղղողիցիայի հանդեպ մեր հակառակորդները: Բանից դուրս ե դալիս, վոր Տրոցկին շատ կանոնավոր ե սկսել մտածել և շատ ուղիղ ե սկսել արտացոլել մեր կուսակցության մեջ դուրթյուն ունեցող այդ բոլոր տրամադրություններն իր փիլիսոփայությամբ:

Համերաշխ են և նրա հետ գաշնակցականները և ինչո՞ւ չպետք ե համերաշխ լինել, յերբ Տրոցկին կանոնում ե դաշնակցականների տեսակետի վրա: Դա պատահական չե, հենց այն պատճառով, վոր Տրոցկին 13 թ. իր դըրքած հոդվածներում համերաշխում ե դաշնակցականների տեսակետին «հայկական հարցի» *) լուծման խթնդրում և վորտեղ Տրոցկին դաշնակցական կուսակցու-

թյունը հայտարարում ե վորպես «սոցիալիստական 7-րդ բվից», վորը միայն հականդապիտխական ե դառնում 17-թվից» *), այն ինչ մեր կուսակցությունը դեռ ևս Ստեփան Շահումյանի բերնով բնորոշել ե դաշնակցական կուսակցությունը, վորպես մի ուսակցիոն և բուրժուական կուսակցությունը իր գարգացման բոլոր ետապներում, չնայած նրան, վոր դաշնակցությունը ժամանակ առ ժամանակ իր տաքտիկան գումավորել և սոցիալիստական ֆրազիալոգիաներով: Նույն դաշնակցությունը այսոր, կանգնում ե տրոցկիզմի տեսակետի վրա մեր հեղափոխության և մեր պետության բնույթի խնդրում: Զբախոսություն արած չլինելու համար մեջ բերենք այստեղ դաշնակցական մամուլի եղերում այն «Վոսկի գոհարները», վորոնք վերաբերվում են նշած խնդրին.

«Ըստ եյության, նիշտ ե ասում Տրոցկին, յերբ Ստալինի քաղաքական գիծը վորակալվորվում ե «տերմիդորական»: Տերմիդոր դեռ չկա, անշուշտ կոմկուսը տակավին շատ ե անզիջող քաղաքական ասպարիզում, բայց դեպքերն ունեն իրենց տրամաբանությունը և կենոր. Կոմիտեյի արած տնտեսական գիշումները անխուսափելի կերպով պիտի առաջնորդեն և քաղաքական գիշումների անհրաժեշտությունը: Ընկերային նոր խավերը—նոր բուրժուազիան, վորոնք ծընունդ են առնում տնտեսական նոր պայմաններից, չեն կարող համարույանս մնալ անհաղորդ քաղաքական իշխանության: Յեվ ուզե կոմուսը՝

*) Տես Տրոցկու ժողովածուն հատոր VI եջ 233

*) Նույնը եջ 447.

թե վոչ, տերմիկորը կդառնա անհրաժեշտ և անխուսափելի:

Այս կողմից ընդդիմադիրների տեսակետը, անկասկած, ուղիղ է: Նրանք են խկալան արտահայտիչը լենինիզմի: Ճիշտ են ասում նրանք, վոր կոմկուսի քաղաքականությունը դեպի փլուզումն ե տանում Խորհրդային իշխանությունը: Բայց նրանց քարոզած գաղափարներն ել միջոց չեն Խորհրդային իշխանության փրկության: Նրանք այսոր կրկնում են այն, ինչ վոր իրապես ընկերավարականներն ասում են, գոյում են հենց հոկտեմբերից սկսած—վոր հետամինաց ու խալար Ռուսաստանում առանց առաջավոր յերկրների բանվորների մասնակցության, կարելի չե հաստատել ընկերավարական կարգ: Յեվ վորովհետեւ առաջավոր աշխարհը շարունակում ե ապրել դրամատիբական կարգերում, անհեթեթություն ե ու վոճիր կոմունիստական տիրապետությունն Ռուսաստանում: այդ տիրապետությունը, անկախ սեփական կամքից, հենց սկզբից դատապարտված են այլասերվելու, վերածվելու բռնակալության և մեռնելու վատագույն մահով:

Ընդդիմադիրները նիշտ են վերլուծում ստեղծված դրությունը:

Նրանց գնահատությունը կոմկուսի՝ այսպես կոչված «ընկերավարական շինարարության» միանգամայն համապատասխանում ե մեր գնահատման:

Մեզ համար պարզ է, վոր Խորհրդային Մի-

ության սահմաններում ընկերավարության նը-
շույն իսկ գոյություն չունի, վոր այնուեղ ա-
ձում ու դարձանում է անսեսության դրամատի-
բական փոխարարերությունները, վոր Խորհրդ-
դային տնտեսությունը աղջատված դրամատի-
բական տնտեսություն և, վոր այդ ճանապարհում
բուշվելիներն արագորեն շարժվում են դեպի
բութուական կարգերի վերականգնումը»*)

Ենչո՞վ ե տարբերվում այս «փելիսոփայությունը»
արոցկիստական «փելիսոփայությունից» վորը մենք տե-
անք վերևում:

Բացարձակապես վոչնչով: Այստեղ տրոցկիստներն
խկական «լենինցիներ» են: Փառք և պատիվ այդպիսի
«լենինցիներին»: Կարծում ենք վոր կոմենտարյաններն
ավելորդ են, վորովհետեւ այս ցիտատն ինքն արգեն
պարզորոշ կերպով ասում ե այն ամենն, ինչ վոր մենք
շարունակ լսում ենք տրոցկիստական ոպազողիցիայից:

Դաշնակները բառացիորեն կընում են այն, ինչ
վոր ոպազողիցիան շպրտում ե լենինյան կուսակցության
հասցեին: Նրանք վորոշակի կերպով ասում են, վոր
այս ամենը «շատ ուղիղ» և «նշմարիտ» և վոր իրենք
դաշնակցականներն ոպազողիցիայից դեռ չառ առաջ ե-
յին կանգնած նույն այդ ճանապարհի վրա: Մնում է
ուրեմն, վոր ոպազողիցիոնները ձեռք մեկնեն դաշնակ-
ներին և այն ժամանակ դաշնակ-ոպազողիցիոն բլոկը
ՀԿԿ-ի և Խորհրդային կառավարության դեմ վերջ-
նականապես ձևավորված կլինի: Վորովհետեւ դաշնակ-

*) «Թրոչակ» № 9, 27 թ. ընդգծումը մերն և Ս.Մ.

ները չե վոր այդ մասին յերազում և ցանկանում են, տուելով որինակի համար համեյալը.

«Կոմիուսի պառակումն արժեքավոր է մեզ համար սոսկ իբրև ցուցանիշ, վորու ամբողջ մերկությամբ յերկան է բերում այն այլիս վոչ մի առարկություն չփերցնող փասոր. թե Լենինի կուսակցությունը քայլ առ քայլ կտրվելով ժողովրդական կենդանի մարմնից՝ հռում ու կազմակություն է, թե՝ նորիրդային իշխանությունը կորցրել է այլիս գոյության ամեն իրավունք ու հնարավորությունն*» :

Խորհրդային իշխանության տագնապը, ուշ կամ կանուխ կլուծվի վոչ թե կոմկուսի կուսակցական սահմաններում ու նրա կամքով, այլ կոմկուսից գուրու և հակառակ նրա կամքի :

Այս ե իրերի յերկաթե տրամարանությունը» :

«Գրոշակ» № 8, 1927 թ.

Ահա Զեզ հակախորհրդային բանակի անթիվ անհամար «յերազանքներից» մեկը և այդ բավականաշատ բնորոշ և ներկա դրության համար :

Ցնծացեք ոսպանովիցիոնների, փառք և պատիվ ձեզ :

Միջազգային իմպերատիզմի հակահեղափոխական զործակալները՝ Վրացյան—Մատիսյան—Ռամիշվիլի—Սուլթանովը և ուրիշները վորոշել են ողտովել ոպպովիցիայի ոգնությունից և ամբաժնել իրենց նետերի ընթացքը և ուղղությունը Հիկի և կենակոմի յենինան կայանի գծով :

*) Բնորդումը մերն ե Ս. Մ.

«Եռվկասի ազատապետվոյան կոմիտեն»!!! ուղղուկի հույսեր ե տածում այդ մասին և սակայն՝ չե վոր հայտնի յե արդեն, վոր այդ կոմիտեն բաղկացած ե ամենասրբկա հակահեղափոխականներից, վորոնց արտասահմանի կասպիտալի գիրկն ե նետել Անդրկովկասյան պրոյետարիատը :

Իրենց գրությունների մեկի մեջ նրանք ասում են հետևյալը .

«Մոտենում ե բոլշևիկների անկման ժամը—և նրանց ավերակների վրա մենք կստեղծենք կովկասյան ակատ հանրապետությունների համադաշնակցությունը: Բոլշևիզմը մեռնում է . . .»

«Հայրենիք» 24-6-27 թ.

Մի այլ տեղում դաշնակցական իդեոլոգ, Ալ. Խամբոյանն այսպես ե մարդարեցանում. (sig)

«Քաղաքական աշխարհում առաջնակարգ տեղ ե բռնում այժմ այն հարցը՝ թե բոլշևիզմը պետք ե վերջանա ինքն իրմով, իր ներքին հակասության հետևանքով, թե անհրաժեշտ են արտաքին հնչումների ազդակներ և ս:

Շատերը կարծում են վոր յերկու ազդակներն ալ զործում են ու պիտի գործեն, բոլշևիզմի այսորվա խավարումը՝ անոր կատարյալ ավերումը դարձնելու համար» :

«Հայրենիք» 24-6-27 թ.

Նույն դաշնակցականներն ասում են .

«Կարմիր Մոսկվայի դեմ կռվող բազմազան ուժերի մեջ այս յերեք ընդդիմադիր տարրերու

ուժերի մեջ այս յերեք ընդդիմադիր տարրերուն՝ կոմիսունիան ընդդիմադրություններուն. Ուկրայնայի անջատողականներուն և Ռուս միապետականներուն թերեւ վիճակված է կատարելու բախտորոշ դերը նորիրդային իշխանության բայց այս և տապալման մեջ^{*)})»

«Հայրենիք» 26-6-27 թ.

Տրոցկիստական ոպպողիցիայի աղքատ արսենալից վերև բերված ցիտատները բավականաչափ վորոշ կերպով բնութագրում են ոպպողիցիային, վորագետ մենչեւ վիզմի, դաշնակիզմի և այլ նմանների արտահայտիչը:

Պայքարի տրամաբանությունը նրանց ուղղակի հասցըրեւ և հականչեղափոխական ճաճիբը: Վերջին հականիորհրդային յելույթները միանգամայն ակներեւ կերպով ապացուցում են այն գնահատականի ճշմարտությունը, վոր տվել և մեր կուսակցությունը տրոցկիստական ոպպողիցիայի եվոլյուցիայի և «քեվույուցիա»-ի բնորոշմամբ: Իր զարգացման այժմյան ետապում, տրոցկիստական ոպպողիցիան 100%-ային մենչեւ վիզմի: Տրոցկիստական ոպպողիցիան հասնելով մենչեւ վիզմի՝ Հայաստանում հանդիպում ե, բլոկի մեջ և մտնում դաշնակիզմի հետ, վորի ամենամոտ կողմնակիցը Հայաստանի պայքարմաններում—հանդիսանում և մենչեւ վիզմը: Ֆրակցիոն պայքարի լոգիկան տրոցկիստական ոպպողիցիային դրեց կուսակցությունից դուրս: Տրոցկիստական ոպպողիցիան իր վրա վերցրեց բարրիդատների վրա

^{*)} Բնողձումը մերն ե Ս. Ե.

բացահայտ պայքարողի գերը՝ իշխանության համար: Մեր կուսակցության կողմից սոցիալիստական շինուարության բոլոր խնդիրների քննության ընթացքում պարզեց՝ ոպպողիցիայի ձախ ֆրազների տակ քողարկվող աջ գործերը:

Զինովյեվի և Կամենյեվի շարելկբեխերությունը և Տրոցկու վոչ կայունությունը իրենց արտահայտությունը գտնան: Մոսկվայի և Լենինգրատի Նոյեմբերի 7-ի հակահոկումբերյան յելույթներում:

Կամենյեվը և Զինովյեվը 24 թվին անվանելով Տրոցկուն «մենչեւիզմի աղենու» և նրա ուսումունքը «աղենուրա» վերցրած Դանի և Արբառովիչի հակահեղափոխական, սոցիալ գովածանական լավերից իրենք ընկան կուսակցության միանականությունը պատակառող այդ ցանցի մեջ: Իսկ մի ժամանակ Զինովյեվը և Կամենյեվը կոչ ելին անում կուսակցության, պահպանելու լուրեկիզմը—լենինյան շարքերի միանականությունը «ինչպես աչքի լույս»:

Կուսակցությունը նրանց չի ների: Պրոլետարիատի դասակարգային թշնամիները մի ավելորդ անդամ ևս կուրախանան այդ բանի համար՝ դառնալով տրոցկիստական ոպպողիցիայի ամենալավ զովարանողները:

Ոպպողիցիայի այդ յելույթը բանվորների կողմից լավագույն գեպքում ծաղր կարող և առաջացնել: Դրանից առաջացած վնասը դժբախտաբար միանգամայն պարզ է: Հոկտեմբերյան հանդեսներին ներկա լեզող ոտարյարկրյա թղթակիցների հեռագրերը կհանեն առանց բացառության մեր թշնամի թերթերին. Նրանք ուրախությամբ կը գրեն, զոր իրենց «մարդա-

րեյությունը» կատարված է—նրանք «ավելի» թե կրառնեն։ Բայց Զեմբերլենից մինչև Տրոցկիզմը—միջազգային հականեղափոխության «սպասելիքները» զուր են անցնելու։ ԽՍՀՄ-ն և կուսակցությունը իր շարքերի լենինյան միասնականությամբ թույլ չի տա վոչ մի գժվարություն ոպտագործելու «յերրորդ ուժի» կողմից։ Պրոլետարիատը բավականաչափ ուժեղ և բոլոր նման յելույթների գեմ պայքարելու, Հոկտեմբերի մեծ նվաճումները պաշտպանելու համար։

Յեթե ոպագողիցիան շարունակե համառել կառչած մնալ մենչեկիզմին, յեթե նա շարունակի իր հակալենինյան գործը, այդ զեպքում բանվոր դասակարգը և կոմմունիստական կուսակցությունը դուրս կը շպրտի նրան պղուխտարիատի շարքերից։

ԽՍՀՄ սոցիալիզմի կառուցման գործը առանց ոպագողիցիոներների մասնակցության ևս առաջ կդնա հաստատուն և հաղթական կերպով։

Քիչ բան չե ասված արդեն պարզելու համար, թե դեպի վոր կողմն և աճում Տրոցկիստական—Զինովյեվյան և Սապրոնո-Ամիռոնովյան ոպագողիցիան։ Վերելում հիշատակված մեջբերումները բավականաչափ պարզ կերպով են ցույց տալիս, վոր ոպագողիցիայի գործունեյությունը ամենացնձագին «հույսեր» և առաջ բերում պրոլետարիատի և ՀԿԿ-ի բոլոր դասակարգային թշնամիների շարքերում։ Հակախորհրդային բանակը ցնծում են, վոր ոպագողիցիոներները փաստորն կրկնում են նույնը, ինչ վոր նրանք բազմիցս ասած են յեղել։ Մենչեկները պարզե ի պարզ ասում են, վոր իր պայքառով ոպագողիցիան դասակարգային քաղաքական կովի

ավելի լեզար և ավելի հանրական ձեռքի ձանապարհներ և հարթում (Յարոսլավկի կայարանում տեղի ունեցած ցույցը, Փրակցիոնական ժողովները և վերջապես հականները պնդում են, վոր ոպագողիցիայի գործունեյությունը «խախտում» և կուսակցական մենաշնորհի հիմքերը։ Ուստրիալովիցները ուրախանում են, վոր տերմիդորը մոտիկ ե, վոր անհրաժեշտ է դրավել Խորհրդային Միության պետական ապարատը և այլն։ Նրանք բոլորն ել միասին «հույս» ունեն, վոր «կապայթի» բայլ-շեիլյան միասնականությունը և կոմմունիստական Փրակցիաներին զուգընթաց «ծնունդ կառնեն սոցիալական նաև այլ տարրերը», ինչպես որինակ դաշնակցականները, մենչեկները և այլն, վոր նրանց «հնարավորություն» կտրվի «լիկվիդացիայի» յենթարկել պրոլետարիան դիկտատորական։

Մյուս կողմից յերկրի ներսում հակախորհրդային գործունեյության մենք այնպիսի արտահայտություն ունենք, վորպիսին իր աշխատանքների և իր հակախորհրդային լուսունգների համար հենարան և վնասում ոպագողիցիոն «պլատֆորմների» և ոպագողիցիական գործունեյության մեջ, հետեւելով իր արտասահմանյան կենտրոնների որինակին։

Նրանց թերթերից մեջբերած քաղվածքներից մենք հաստատ կարող ենք համարել արդեն այդ տարրերի համագործակցության փաստն ոպագողիցիոններների հետ։ Մի կողմից ել ահա թե ինչու յե պայքարում մեր կուսակցությունը այդ վտանգավոր ոպագողիցիոն տարրերի գեմ։ Այդ պայքարում հիմնականը այն ե, վոր կարո-

Դանանք մերկացնել ամբողջ կուսակցության և բանվորական ժամանենքի առջև այն բոլոր վտանգներն, վորոնք առաջ են գալիս ոպպողիցիայի գործունեցությունից, նրա տեսակենությունը և պլատֆորմներից։ Մեր հակառակորդները յենիւով մեր ներկուսակցական կացությունից յեզրակացություններ են հանում մեր մասին և յեթե մեր կուսակցության մեջ այլ և այլ խմբակցություններ և Փրակցիաները լենինյան պողպատյաշորերը կազմալուծելու աշխատանք են կատարում և կոմինտերնի թշնամի պարբերականներում տպագրում են իրենց գանազան փաստաթղթերը, հապա մեր հակառակորդները գալիս են այն յեզրակացության, վոր համարձակ կերպով կարող են հարձակվել ԽՍՀ Միության վրա։

Բոլոր ուժերով մենք պետք են աշխատենք, վոր ոպպողիցիան իր այս հերթական հարձակման մեջ՝ կուսակցության կողմից նորից կրի նյույն պարտությունը, ինչ վոր կրել ենա անցյալում, և վոր այդ պարտությունը լինի լիակատար և վերջնական։

Սակայն, խնդիրն այն չե միայն, վոր ոպպողիցիոն Փրակցիաները և խմբակցությունները լիկվիդացիայի յենթարկեն, այլ և այն, վոր դրա հետ միասին մերկացվի ոպպողիցիայի գաղափարական բովանդակ փըթումը, նրա ամբողջ ուղարտյունիստական եյությունը և նրա բովանդակ վտանգը կուսակցության և բանվորակարգի կոչվածք համար, վորպիսին (այդ գասակարգը) կոչվածք է կրելու լենինյան գրոշը մինչև հաղթական վարժանք։

«Յերրորդ ուժի» և վոչ մի միջամտությունը յե-

նինյան կուսակցության մեջ ստեղծված ներքին կացության, արդարեղից ոպուտ քազելու նպատակով։ Վոչ մի չետեանք չի ունենաւ և նրանք հենց այդտեղն են ջախջախելու իրենց գանձերը Համեմկուսի լինինյան շարքերի և ԿՍՀՄ բանվոր գասակարգի ուժով։

Կուսակցական միասնականությունը, համախմբումը—ՀԿԵ-ի, Կենտկոմի լենինյան կայանի շուրջը՝ առանց վորի մենիք չենի կարող և վոչ մի լուրջ հաջողություն ունենալ, այսոր մեր համար թանգ և և անհրաժեշտ ավելի քան յերբեք։ Համամիութեանական կադամկերպության ծավալով մեր սկսված դիսկուսիան ցույց կտա իր լենինյան—բոլշևիկյան գեմքը։ Մեր կուսակցությունը այդ դիսկուսիայից դուրս կգա խուսացրած և միակուռ շարքերով՝ կումունիստական կուսակցության միասնականության նշանաբանի տակ, սակայն՝ վոչ թե կոմունիստիկ և գաղափարկան զիջումների, այլ՝ ոպպողիցիան խոհորդիկյան արքած միահմառու վերջնական հակառակունի և ջախջախման ձանապարհով սոցիալիստական շինարարության կուրսի միահմական կիրառմամբ։

Ոպպողիցիան (արոցկիստական—սապրոնվյան) վերջնականապես լիկիլիդացիայի յենթարկվեց թե զաղափարապես և թե կազմակերպչորեն։ Նա կանցնի պատմության մեջ, վորպես բոլշևիզմի զարգացման ընթացքում առաջացած անփառութակ խմբավորություններից մեկը։ Կուսակցության 15-րդ համագումարը վերահշյալ խոդիրների մասին իր վերջնական հեղինակագոր խոսքը կտոր. նա առաջկիստական ոպպողիցիային ամենավերջին համաձայնելուց հետո, թե կազ-



մակերպչորեն և թե զաղափարապես, զույց կտա մեզ
ավելի կուռ շարքերով և անսասան միասնականությամբ
շարունակելու սոցիալիստական շնորհարությունը աշ-
խարհի առաջին պրոլետարական պետության մեջ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0183445

ԱՐ 1
ՏԻՍՆ Ե 15 ԿՈՊ.